պատրիարգին կամաւ և յօժարութեամբ երուսաղէմա-
ցոց և ամենայն քաղաքիս, զի երթեալ անդ զայս
արասցէ զէմրն և զհրաման թագաւորին, որ էառ աս-
տի: Միթէ Տէրն մեր Քրիստոս յառաջ տարեալ զգործս
բարեխօսութեամբ Մօր և Կուսի և ամենայն սրբոց:

Ուրբաթ (10 Հոկտ.). Բախան մեռաւ. ի գերեզմա-
նէրն գնացաք:

Կիրակի (12 Հոկտ.). ի Ղալաթա գնացաք ի տուն
Մուսաբենցն՝ հարսնիք

Բշի (13 Հոկտ.) իրկուն[1]) եկաք ընդ Թադէոսիւն[2])
ի տուն: Եւ օրս Թորոս կաթողիկոսն Սըսայ եկն յՈւս-
կիւտարն:

Դշի (15 Հոկտ.) աստ եկն յԱստուածածնին:

Շաբաթ (18 Հոկտ.) երեկոյիս կաթողիկոսն դաս
ասաց, եւ կիրակի (19 Հոկտ.) առաւօտուս ևս: Սի-
մոնն եկաւ ի գեղէն:

Ուրբաթ (24 Հոկտ.). Ժողով արար կաթողիկոսն
թէ կ'երթամ յԷջմիածին մինչև Աստուածատուր վար-
դապետն արասցէ զժողովն և ծանր ոչ թվեսցի նմա:

Եւ վէգիրն չուրջ գայր և զբազումս գանէր՝ զհայ
և զտաճիկ և զմրգածախսն որք պակաս չափ ունէին,
և զգինեվաճառն ևս, այլ և ոչ թոյլ տայր որ գինի
անցանէր ի ներս և ոչ մի տրամ, և գնայլին մեծա-
մեծք գինեվաճառացն յայս կոյս և յայն կոյս անկա-
նելով և դրամ խարճելով հազիւ զայս վերուցին:

Կիրակիս (26 Հոկտ.) կաթողիկոսն պատարագ ա-
րար:

Դշիս (28 Հոկտ.) Բ կին կախեցին ի մէջ չուվալի
եղեալ, քանզի ի կերպ մարդոյ չուրջ գալով բազում
անհիս գործէին:

Եշի (30 Հոկտ.). կաթողիկոսն գնաց ի յԷջմիածին.

1) երկուն. 2) Թթուն.